ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2011թ. օգոստոսի 10-ին, թիվ 88 -Ա
ք.Աշտարակ

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2002թ. հուլիսի 26-ի «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի քաղաքացիական ծառայության առաջատար թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթ, ինչպես նաև առաջատար և կրտսեր պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ատեստավորումն անցկացնող մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգը հաստատելու մասին» թիվ 7 որոշումը՝ *որոշում եմ.*

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի առաջատար մասնագետի /ծածկագիր՝ 61-3.2-14/ 2011թվականի օգոստոսի 11-ին մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզպետի
2011թ. օգոստոսի10-ի թիվ 86-Ա որոշման

ԿԱԶՄ

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի առաջատար մասնագետի /ծածկագիր՝ 61-3.2-14/ 2011թ. օգոստոսի 11-ին մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի

1. Սահակ Ասլանյան - ՀՀ ՔԾԽ աշխատակազմի իրավաբանական վարչության գլխավոր մասնագետ, հանձնաժողովի նախագահ
2. Կարեն Բարսեղյան - ՀՀ ՔԾԽ աշխատակազմի վերահսկողության և վերլուծության վարչության գլխավոր մասնագետ, հանձնաժողովի քարտուղար
3. Մարիամ Եդիգարյան - ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ
4. Կարեն Տոնոյան -ՀՀ Արագածոտնի մարզպետի խորհրդական
5. Անժելա Իսպիրյան - Աշտարակի թիվ 1 հիմնական դպրոցի ուսուցչուհի
6. Արամայիս Ղազարյան - Աշտարակի Վ. Պետրոսյանի անվան վարժարանի ուսուցիչ

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար՝ Հ.ԳԵՎՈՐԳՅԱՆ